ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"11" 06 2019թ. N 151-Ա

ՀՐԱՄԱՆ

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից տրանսպորտի բնագավառում «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով լիցենզիաներ տրամադրելու, լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ լիցենզավորող մարմնի ղեկավարին եզրակացություն տրամադրելու, ինչպես նաև լիցենզավորման հանձնաժողովին վերապահված այլ գործառույթներ իրականացնելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքներ նախարարության լիցենզավորման հանձնաժողով հետևյալ կազմով.

Ա. Սիմոնյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ,
Ա. Սահակյան	Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարարության լիցենզավորման գործակալության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ,
Ա. Ստեփանյան	Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և

	տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարարության լիցենզավորման գործակալության պետի տեղակալ, պատասխանատու քարտուղար,
Հ. Բատիկյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարարության իրավաբանական բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,
Կ. Գասպարյան	Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարարության տրանսպորտի վարչության պետ, հանձնաժողովի անդամ,
Ա. Մուսոյան	Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարարության երկաթուղու վարչության պետ, հանձնաժողովի անդամ,
Ն. Թևոսյան	Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարարության լիցենզավորման գործակալության գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

6/11/2019

X

ՎԱՉԵ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Signed by: TERTERYAN VACHE 1201620635

Նախարար
Ս. ՊԱՊԻԿՅԱՆ

<<----->> ---------- 2019թ.

ք. Երևան

Հավելված

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների

նախարարի <<18>> ---------06------- 2019թ. թիվ 151-Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1 Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետև՝ Նախարարություն) լիցենզավորման հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) ստեղծվում և փոփոխվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանով:

2 Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

2.ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ

3. Հանձնաժողովի հիմնական խնդիրն է նպաստել Հայաստանի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման, երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպման և տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեություն լիցենզավորման գործընթացի իրականացմանը:

4.Հանձնաժողովն իրեն վերապահված խնդրին համապատասխան և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ա) լիցենզիա տալու, լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ եզրակացություն է տրամադրում լիցենզավորող մարմնի ղեկավարին,

բ) «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ գործողություններ:

3.ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Հանձնաժողովը հարցերը քննարկելու նպատակով նիստերը հրավիրում է ըստ անհրաժեշտության:

6. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

7. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ փակ գաղտնի քվեարկությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշումը համարվում է ընդունված հօգուտ հայտատուի կամ լիցենզավորված անձի (այսուհետև՝ հրավիրված անձ):

8. Հարցերի քննարկման մասին հրավիրված անձին պատշաճ ձևով հայտնվում է քննարկումից ոչ ուշ քան երկու օր առաջ՝ տեղեկացնելով նրան քննարկման վայրի (հասցեի), օրվա և ժամի մասին:

9. Հանձնաժողովի նիստի նախագահողը նիստի ժամանակ հրապարակում է քննարկվող հարցերը, ներկայացնում է հրավիրված անձանց, հարցերի քննարկմանը մասնակցող անձանց բացատրում է իրենց իրավունքներն ու պարտականությունները, հրապարակում է հայտերի, ինչպես նաև քննարկվող այլ փաստաթղթերի բովանդակությունը:

10. Հրավիրված անձանց հարցերի քննակմանը չմասնակցելը հիմք չի հանդիսանում հարցերը չքննարկելու կամ այն մերժելու համար, եթե հրավիրված անձը չի ներկայացրել իր հարցի քննարկումը այլ ժամկետում անցկացնելու գրավոր դիմում: Հրավիրված անձի հարցի քննարկումը այլ ժամկետում անցկացնելու դիմումը կարող է բավարարվել, եթե նա քննարկմանը չի կարող մասնակցել հարգելի պատճառով և քննարկումը հետաձգելիս չի խախտվում օրենքով հայտի քննարկման համար նախատեսված ժամկետները:

11.Հրավիրված անձն իրավունք ունի հարցի քննարկմանը մասնակից դարձնելու մասնագետի, փորձագետի, աուդիտորի, իրավաբանի կամ թարգմանչի: Հրավիրված անձը կամ նրա շահերի պաշտպանը իրավունք ունի ելույթներ ունենալ, պատասխանել հանձնաժողովի անդամների հարցերին, ներկայացնել միջնորդություններ:

12. Հանձնաժողովի նիստում հարցերի քննարկումներն իրականացվում են դռնբաց: Հրավիրված անձի պահանջով քննարկումը կարող է իրականացվել դռնփակ, եթե հարցի քննարկման ժամանակ բացահայտվելու են առևտրային գաղտնիք պարունակող տեղեկություններ: Դռնբաց քննարկումներին կարող են մասնակցել լրագրողներ, մասնագետներ, այլ անձինք:

13. Հանձնաժողովի որոշումը կայացվում է հարցի քննության ավարտից հետո՝ դռնփակ: Հանձնաժողովի կողմից որոշման կայացման ժամանակ տվյալ սենյակում կարող են գտնվել միայն հանձնաժողովի անդամները:

14. Հանձնաժողովի եզրակացությունները հրապարակվում են և պատշաճ ձևով հանձնվում կամ ուղարկվում են հրավիրված անձին:

15. Հանձնաժողովում հարցերի քննարկման ժամանակ կազմվում է արձանագրություն, որտեղ նշվում է՝

1) հանձնաժողովի նիստի անցկացման ամսաթիվը և տեղը,

2) հանձնաժողովի տեսակը և կազմը,

3) քննարկվող հարցերի բովանդակությունը,

4) տեղեկություն քննարկմանը մասնակից անձանց մասին,

5) հարցի քննարկմանը մասնակցող անձանց բացատրությունները, նրանց միջնորդությունները և դրանց քննարման արդյունքները,

6) հարցի քննարկման ընթացքում հետազոտված փաստաթղթերը և այլ ապացույցներ,

7) հանձնաժողովի եզրակացության բովանդակությունը,

8) տեղեկություն՝ ընդունված եզրակացության հրապարակման մասին:

16. Հանձնաժողովի եզրակացությունն այն կայացնելու օրը հանձնվում է լիցենզավորող մարմնի ղեկավարին:

17. Հանձնաժողովի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստի նախագահողը և հանձնաժողովի քարտուղարը:

18. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում է հանձնաժողովի նիստեր և նախագահում նիստերը,

2) կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները,

3) ստորագրում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և հանձնաժողովի գործունեությանն առնչվող մյուս փաստաթղթերն ու գրագրությունը,

4) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

19. Հանձնաժողովի նախագահի տեղակալը հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում ստանձնում է նրա պարտականությունները:

20. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) նախարարության համապատասխան ստորաբաժանումից ստանում է նիստում քննարկման ենթակա նյութերը և նախապատրաստում է հանձնաժողովի նիստերը,

2) տեղեկացնում է հանձնաժողովի անդամներին հանձնաժողովի հերթական նիստի անցկացման վայրի, ժամանակի և քննարկվող հարցերի մասին՝ նիստի օրվանից առնվազն մեկ օր առաջ,

3) ստորագրում է հանձնաժողովի արձանագրությունները,

4) հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում վերջինիս գործունեությանը վերաբերող նյութերն ու ընթացիկ տեղեկությունները, նախապատրաստում է առաջարկություններ դրանց վերաբերյալ,

5) կազմում է հանձնաժողովի եզրակացությունները:

21. Հանձնաժողովի նիստից հետո քննարկման ներկայացված նյութերը պահպանվում են հանձնաժողովի քարտուղարի աշխատասենյակում կամ դրա համար առանձնացված այլ սենյակում:

22.Հանձնաժողովի քարտուղարի բացակայության դեպքում հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները ստանձնում է հանձնաժողովի անդամներից մեկը՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

23. Հանձնաժողովի անդամները՝

1) մասնակցում են հանձնաժողովի նիստերին, հանձնաժողովի աշխատանքային պլանների մշակման և դրանց իրականացման հետ կապված աշխատանքներին,

2) հանձնաժողովի նիստին հարգելի պատճառով չմասնակցելու դեպքում նախապես տեղեկացնում են հանձնաժողովի նախագահին կամ քարտուղարին:

3.ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

24. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

25. Հանձնաժողովի գործունեության դադարումից հետո հանձնաժողովի գործունեությանն առնչվող փաստաթղթերը և այլ նյութերը ենթակա են պահպանման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: